

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-99>

ՄԱՐԿ ԱԶԴԱՐԻԴԻՍ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան

MARC AZDARIDIS

Advocate, Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia

МАРК АЗДАРИДИС

Адвокат, Член Палаты адвокатов Республики Армения

**ԶԵՆՔԻ ԿԱՄ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱԴԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿԱՄ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱՄ
ՄԻՋՈՑԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՈՐԱԿՅԱԼ ՀԱՏԿԱՆԻՇ՝ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ**

**THE USE OF A WEAPON OR AN OBJECT OR MEANS PREPARED OR
ADAPTED IN ADVANCE TO CAUSE BODILY HARM AS A QUALITATIVE
CHARACTERISTIC OF THE COMMITMENT OF A CRIME ACCORDING TO
THE NEW CRIMINAL CODE OF THE RA**

**ИСПОЛЬЗОВАНИЕ ОРУЖИЯ, ИЛИ ПРЕДМЕТА, ИЛИ СРЕДСТВА,
ЗАРАНЕЕ ИЗГОТОВЛЕННОГО ИЛИ ПРИСПОСОБЛЕННОГО
ДЛЯ ПРИЧИНЕНИЯ ТЕЛЕСНЫХ ПОВРЕЖДЕНИЙ КАК
КВАЛИФИЦИРУЮЩИЙ ПРИЗНАК СОВЕРШЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЯ
В СООТВЕТСТВИИ С НОВЫМ УГОЛОВНЫМ КОДЕКСОМ РА**

Ներածություն

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Նոր օրենսգիրք) զգալիորեն փոփոխեց ներպետական քրեական օրենսդրությունը՝ ներառելով նոր քրեաիրավական ինստիտուտներ, ինչպես նաև հայեցակարգային փոփոխությունների ենթարկելով գործող ինստիտուտները: Ի թիվս այլնի, էական փոփոխության է ենթարկվել մի շարք հանցակազմերի որակյալ հատկանիշ հանդիսացող համապատասխան հանցավոր արարքի կատարումը զենքի կամ դետրուկտիվ տեսանկյունից համադրելի հետևանքներ առաջացնող, կենդանի կամ ոչ կենդանի օբյեկտները վնասելու համար պիտանի և միաժա-

մանակ զենք չհանդիսացող այլ գործիքի (այսուհետ նաև՝ Համադրելի գործիք) գործադրմամբ:

Հոդվածի ուսումնասիրության առարկան վերաբերում է հիշատակված փոփոխությանը՝ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարված լինելու որակյալ հատկանիշով արարքի որակմանը:

Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում խնդրո առարկա հարցի վերաբերյալ հակասական իրավակիրառ պրակտիկայի առկայությունը, օրենքի ոչ միատեսակ կիրառության բազմաթիվ դեպքերը, տեսական իրարամերժ մեկնաբանությունները, ինչպես նաև իրավակարգավորման համապարփակ մեկնաբանության անհրաժեշտությունը:

Հետազոտության շրջանակում քննարկման առարկա են դարձվելու վերոնշյալ որակյալ հատկանիշի պատմական զարգացումները և փոփոխությունները ներպետական քրեական իրավունքում, ապա ներկայիս իրավակարգավորումը և դրա էությունը՝ քննարկելով նաև վերջինիս առերևույթ խնդրահարույց հանգամանքներն ու վերաբերելի իրավակիրառ պրակտիկան: Մասնավորապես՝ բարձրացվելու են նաև այն իրավական հարցերը, թե՛

- որո՞նք են առարկան կամ միջոցը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված դիտարկելու չափանիշները,

- ի՞նչ նպատակով պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի ծանրացնող հանգամանքի առկայության համար,

- ու՞մ կողմից պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի,

- կարո՞ղ է արդյոք դեպքի վայրից վերցված առարկայի գործադրումն առաջացնել ծանրացնող հանգամանքը,

- ներառու՞մ է արդյոք գործադրում հասկացությունը գործադրման սպառնալիքը:

Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են իրավահամեմատական, անալիզի և սինթեզի, ինչպես նաև դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները:

Հիմնական հետազոտություն

1.Որակյալ հատկանիշի զարգացումը ժամանակի ընթացքում

1.1. ՀԽՍՀ օրենսգիրք

Զենքի կամ Համադրելի գործիքի գործադրումը՝ որպես քրեորեն պատժելի արարքի կատարումն առավել հանրային վտանգավոր դարձնող գաղափարը հայկական քրեաիրավական օրենսդրությունում առկա է եղել դեռևս խորհրդային ժամանակաշրջանից: Մի շարք հանցակազմերի որակյալ հատկանիշ հանդիսացող ծանրացնող հանգամանքը ժամանակի ընթացքում կրել է էական փոփոխություններ, որոնք վերաբերել են թե՛ հանցակազմերին, որում ծանրացնող հանգամանքը ներառված է եղել, թե՛ ծանրացնող հանգամանքի բովանդակությանը և կիրառելիության շրջանակին:

Այսպես, 1961 թվականի մարտի 7-ին ընդունված, նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժը կորցրած Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քրեական օրենսգրքով (այսուհետ նաև՝ ՀԽՍՀ օրենսգիրք) նախատեսված էր **«իրազենի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը»** որպես ավազակության միջոցով գույքի հափշտակման (88-րդ հոդված) որակյալ հատկանիշ: Բացի դրանից՝ նույն օրենսգիրքը սահմանում էր **«զենքի գործադրումը»** որպես իշխանազանցության կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելու (183-րդ հոդված), պետին դիմադրելու կամ նրան ծառայության պարտականությունները խախտելուն հարկադրելու (248-րդ հոդված), զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքի

կանոնները նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու (252-րդ հոդված) կատարման ծանրացնող հանգամանք: Վերոգրյալից զատ՝ ամրագրված էր նաև **«հրազենի կամ դանակի, կասկեղի կամ այլ սառը զենքի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաների գործադրումը»** որպես խուլիգանության (222-րդ հոդված) առավել ծանրացնող հանգամանք:

ՀԽՍՀ օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ խիստ սակավաթիվ են եղել հանցակազմերը (ընդհանուր 6 հանցակազմ), որոնք որպես որակյալ հատկանիշ են նախատեսել համապատասխան արարքի կատարումը զենքով կամ Համադրելի գործիքով: Միևնույն ժամանակ, ՀԽՍՀ օրենսգրքը զարմանալիորեն չէր նախատեսում զենքի կամ Համադրելի գործիքի կիրառմամբ արարքի կատարումը որպես որակյալ հատկանիշ մի շարք հանցակազմերի դեպքում, որոնք մշտապես աչքի են ընկել պրակտիկայում նշված գործիքների հաճախակի կիրառմամբ կատարված լինելով, որոնցից են, ի թիվս այլնի, դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք հասցնելը (105-րդ հոդված) կամ բռնաբարությունը (112-րդ հոդված): ՀԽՍՀ օրենսգրքի մեկ այլ հատկանշական գիծ է տարբեր հանցակազմերի դեպքում նույնաբնույթ ծանրացնող հանգամանքի թե՛ նորմատիվային, թե՛ լեզվաբանական տարբերակումը: Այսպես, ՀԽՍՀ օրենսգրքում 6 հանցակազմի ըստ էության նույնական ծանրացնող հանգամանքը սահմանելու համար օգտագործվել են միաժամանակ 1. «հրազեն», 2. «որպես զենք օգտագործվող առարկա», 3. «զենք», 4. «դանակ», 5. «կասկեղ», 6. «սառը զենք», 7. «մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկա» եզրույթները: Վերոգրյալը թերևս վկայում է ոչ լավագույն օրենսդրական տեխնիկայի կիրառման մասին՝ հաշվի առնելով, որ առկա չէ հիշատակված հանցանքների դեպքում հանցագործության գործիքի վերաբերյալ տարբերվող իրավական կարգավորումներ նախատեսելու որևէ ծանրակշիռ հիմք: Օրինակ, անհիմն է ավագակության հանցակազմում զենքի տեսակի շեշտադրումը՝ հրազեն, և հետևաբար սառը զենքի բացառումն այն դեպքում, որ տվյալ հանցակազմի դեպքում անգամ զենք չհանդիսացող, սակայն որպես զենք օգտագործվող ցանկացած առարկայի գործադրումը հանգեցնելու է որակյալ հատկանիշի առկայությանը: Այլ կերպ ասած, հիշատակված կարգավորումը ենթադրում էր բացի հրազենից որևէ այլ տեսակի զենքի գործադրման դեպքում ծանրացնող հանգամանքի բացակայություն այն պարագայում, երբ զենքից ցածր հանրային վտանգավորություն ունեցող առարկաների գործադրումը հանգեցնելու էր նույն ծանրացնող հանգամանքին: Այս առումով հատկանշական է, որ ՀԽՍՀ օրենսգրքում օգտագործված «հրազեն», «սառը զենք», «զենք» եզրույթների էությունը բացահայտված է եղել այլ իրավական ակտերով, նախ՝ Սովետական Միության տարբեր գերատեսչական ակտերով, ապա՝ 1998 թվականի հուլիսի 3-ին ընդունված և 1998 թվականի սեպտեմբերի 13-ից մինչև 2023 թվականի հունիսի 1-ն ուժի մեջ եղած «Ձենքի մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվում էր, որ **զենք** է հանդիսանում իր կառուցվածքով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու կամ ազդանշան արձակելու համար նախատեսված սարքը և առարկան, **հրազեն** է հանդիսանում վառողի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին՝ նպատակաուղղված շարժում ստացած գնդակի միջոցով տարածության վրա գտնվող նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենքն, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են՝ փողը, փակադակը, թմբուկը, իրանը, փողի պահպանակը, իսկ **սառը զենքը** մարդու մկանային ուժի օգնությամբ, օբյեկտի հետ անմիջական շփման ժամանակ այն խոցելու համար նախատեսված զենքն է՝

¹1998 թվականի հուլիսի 3-ին ընդունված «Ձենքի մասին» ՀՀ օրենք

1.2. Նախկին օրենսգիրք

ՀՀ Ազգային ժողովը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունեց ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ նաև՝ Նախկին օրենսգիրք), որն ուժի մեջ մտավ 2003 թվականի օգոստոսի 1-ին և գործեց մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը: Նախկին օրենսգրքում նախատեսվեց ՀԽՍՀ օրենսգրքի համեմատությամբ զգալիորեն ավելի լայն հանցակազմերի շրջանակ, որի որակյալ հատկանիշն էր խնդրո առարկա ծանրացնող հանգամանքը: Այսպես, Նախկին օրենսգրքում սահմանվեց **«զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրումը»** որպես մարդուն առևանգելու (131-րդ հոդված), ազատությունից ապօրինի զրկելու (133-րդ հոդված), բռնաբարության (138-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139-րդ հոդված), ավազակության (175-րդ հոդված), խուլիգանության (258-րդ հոդված), ձերբակալված, կալանավորված, ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված կամ արգելանքի վերցված անձի փախուստի (355-րդ հոդված), պատանդ վերցնելու (218-րդ հոդված), շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելու (219-րդ հոդված), օդանավ, նավ կամ երկաթուղային շարժակազմ փախցնելու կամ զավթելու (221-րդ հոդված), պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրանք կատարելու սպառնալիքի (358-րդ հոդված), ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրանք կատարելու սպառնալիքի (358.1-րդ հոդված), զորամաս կամ հատուկ պահպանվող զինվորական այլ տարածք ապօրինի մուտք գործելու (327.6-րդ հոդված) որակյալ հատկանիշ: Միաժամանակ, պաշտոնեական լիազորություններն անցնելու (309-րդ հոդված) դեպքում հանցակազմը որակյալ դարձնող հիմք նախատեսվեց արարքի կատարումը **«զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով»**, իսկ ահաբեկչության (217-րդ հոդված) դեպքում՝ **«հրազենի գործադրումը»** (իրավադրույթն ուժը կորցրել է 2014 թվականի հունիսի 21-ին): Մյուս կողմից, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում (359-րդ հոդված) դիտարկվեց ծանրացնող հանգամանքներում կատարված արարքի **«զենք կամ առողջությանը վնաս պատճառելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ գործադրելով»** կատարված լինելու դեպքում:

ՀԽՍՀ և Նախկին օրենսգրքերի համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ գլխավոր փոփոխությունը վերաբերել է մի շարք հանցակազմերի դեպքում նոր որակյալ հատկանիշի նախատեսմանը, որը բացակայել է ՀԽՍՀ օրենսգրքում: Միևնույն ժամանակ, Նախկին օրենսգրքի ընդունմամբ օրենսդիրը հանցակազմերի մեծամասնության դեպքում նախապատվություն է տվել **«զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրումը»** ձևակերպմանը որպես խնդրո առարկա որակյալ հատկանիշի արտահայտման ձև՝ այնուամենայնիվ պահպանելով առանձին դեպքերում որակյալ հատկանիշի այլ դրսևորումներ:

Օրենսդրական փոփոխություններն ակներև են հատկապես խուլիգանության ծանրացնող հանգամանքների օրինակով: Մասնավորապես, ՀԽՍՀ օրենսգիրքը խուլիգանությունն ըստ հանցագործության գործիքի ծանրացնող հանգամանքներում կատարված էր համարում այն դեպքում, երբ համապատասխան արարքը կատարվել էր **հրազենի կամ սառը զենքի կամ մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաների գործադրմամբ**, իսկ Նախկին օրենսգիրքը՝ **զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ**: Իրավադրույթների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը հրաժարվել է զենքի տեսակների սպառնիչ թվարկումից՝ յուրաքանչյուր զենքի կիրառմամբ կատարված խուլիգանությունը դիտարկելով որպես ծանրացնող հանգամանքներում կատարված, բացի այդ, օրենսդիրը փոխարինել է «մարմնական վնասվածքներ

հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ» եզրույթը «որպես զենք օգտագործվող առարկաներ» եզրույթով: Նշված երկու փոփոխություններն էլ վկայում են օրենսդրի կողմից քննարկվող որակյալ հատկանիշի կիրառման շրջանակի էական լայնացման միտման մասին:

Տեղի ունեցած փոփոխություններին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) իր մի շարք նախադեպային որոշումներում:

Այսպես, Վճռաբեկ դատարանը, *Սերյոժա Հովակիմյանի* վերաբերյալ գործի շրջանակներում անդրադառնալով խուլիգանության հիշատակված որակյալ հատկանիշին, իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ. «(...) գործող [2003 թվականի] և նախկին [1961 թվականի] քրեական օրենսգրքերը ծանրացնող հանգամանքներում կատարված խուլիգանության հանցակազմի քննարկվող հատկանիշը նկարագրելիս օգտագործում են տարբեր ձևակերպումներ. մեկը՝ «որպես զենք օգտագործվող առարկաների գործադրում» (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 258-րդ հոդված), իսկ մյուսը՝ «մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված առարկաների գործադրում» (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 222-րդ հոդված): Դատարանը գտնում է, որ նշված ձևակերպումների միջև առկա է ոչ միայն խմբագրական (ոչ նորմատիվային), այլև նորմատիվային տարբերություն. ՀՀ նոր քրեական օրենսգրքի 258 հոդվածի տեքստից բացակայում է մարմնական վնասվածքներ հասցնելու (կենդանի նշանակետ խոցելու) համար օգտագործվող առարկայի այն հատկանիշը, որ դա պետք է հատուկ հարմարեցված լինի մարմնական վնասվածքներ հասցնելու համար: Հետևաբար, 2003 թվականի օգոստոսի 1-ից՝ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո, արարքը որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության հանցակազմով որակելու համար անհրաժեշտ չէ, որ այդ առարկաները հատուկ հարմարեցված լինեն. դրանք կարող են վերցված լինել նաև դեպքի վայրում: Քննարկվող իրավանորմի դիսպոզիցիայի կառուցվածքից որպես զենք օգտագործվող առարկաների՝ հատուկ հարմարեցված լինելու հատկանիշի դուրս բերումը պետք է գնահատել որպես խնդրո առարկայի վերաբերյալ օրենսդրի մոտեցման ակնհայտ փոփոխություն՝ պայմանավորված դեպքի վայրում վերցված առարկաները որպես զենք օգտագործելու հետ զուգորդված խուլիգանության հանրային վտանգավորության վերագնահատմամբ: Եթե նախկինում դրա աստիճանը գնահատելիս օրենսդիրն էական նշանակություն էր տալիս որպես զենք օգտագործվող առարկայի գործադրման վաղորոք ծագած դիտավորությանը, ապա ներկայում առավել էական է ինքնին գործադրման փաստը: Այսպիսով, օրենսդրի դիրքորոշման փոփոխության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ խուլիգանության արդյունքում խաթարվող հասարակական հարաբերությունների բնույթը, ինչպես նաև տուժողին հասցվող վնասի աստիճանն էապես պայմանավորված չէ այն հանգամանքով, թե հանցագործության գործիքը՝ որպես զենք օգտագործվող առարկան, հատուկ հարմարեցված է, թե ոչ, և այն հանցավորի կողմից բերվել է, թե վերցվել է դեպքի վայրից²»:

Ազատ Խլղթյանի և *Աշոտ Աթաբեկյանի* վերաբերյալ գործի շրջանակում Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ խուլիգանության դեպքում համապատասխան առարկաների գործադրումը բարձրացնում է առավել ծանր հետևանքների առաջացման հավանականությունը՝ պայմանավորված անձանց կյանքին կամ առողջությանը լուրջ վնաս պատճառելու հավանական վտանգով, ուստի պատահական չէ, որ հանցագործության նման եղանակն օրենսդրորեն

² ՀՀ Վճռաբեկ դատարանի Սերյոժա Հովակիմյանի վերաբերյալ գործով 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-125/07 որոշում

գնահատվել է որպես բարձր հանրային վտանգավորություն ունեցող և նախատեսվել որպես խուլիգանության հանցակազմն առավել որակյալ դարձնող հանգամանք: Ընդ որում, զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրում ասելով՝ պետք է հասկանալ կամ նշված առարկաների փաստացի գործադրումը (օրինակ՝ կրակոց արձակելը, հարվածներ հասցնելը և այլն), կամ գործադրման փորձը (դիտավորյալ գործողություններ, որոնք, սակայն, հանցավորի կամքից անկախ հանգամանքներում չեն հաջողվում), կամ դրա սպառնալիքը (զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկաները ցուցադրելու կամ այլ եղանակով)³:

Մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որպես զենք օգտագործվող կարող են լինել այն առարկաները, որոնց օգտագործմամբ կարող է պատճառվել անձի մահ կամ առողջությանը վնաս (օրինակ՝ կացին, խոհանոցային դանակ, մուրճ և այլն)⁴:

Կատարված օրենսդրական փոփոխությունների և դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումների արդյունքում ըստ գործիքի ծանրացնող հանգամանքներում կատարված են համարվել Նախկին օրենսգրքով իբրև ծանրացնող հանգամանք որպես զենք օգտագործվող առարկայի գործադրումը նախատեսող բոլոր այն հանցանքները, որոնք իրականացվել են զենք չհանդիսացող ցանկացած, այդ թվում նաև՝ կենցաղային, առարկայի գործադրմամբ (գործադրման փորձ, սպառնալիք), որը կարող է նվազագույն վնաս պատճառել մարդու առողջությանը՝ անկախ տվյալ առարկայի տեսակից և ֆունկցիոնալ նշանակությունից, որևէ փոփոխության ենթարկված լինելուց կամ այն հանցավորի կողմից բերվելուց կամ դեպքի վայրից վերցված լինելուց: Այլ կերպ ասած, ծանրացնող հանգամանքի կիրառման չափանիշն այն աստիճան է նվազեցվել, որ էական է համարվել միայն այն, թե տվյալ առարկան գործադրվել է կամ գործադրման փորձ կամ սպառնալիքի տեղի ունեցել է, թե ոչ և եթե այո, ապա այդ առարկայի գործադրումը տեսականորեն կարող է առնվազն մարդու առողջությանը որևէ վնաս պատճառել, թե ոչ: Նման մոտեցումը, ըստ իս, արդարացված չէր, քանի որ չի կարող հանրային ավելի բարձր վտանգավորություն ունենալ օբյեկտիվ աշխարհում գոյություն ունեցող յուրաքանչյուր գործիքի կիրառմամբ որևէ հանցանք կատարելը, եթե միակ հիմքը որակյալ հատկանիշի առկայության գործադրված գործիքի մարդու առողջությանը որոշակի վնաս պատճառելու ունակությունն է այն դեպքում, երբ առանց որևէ գործիքի անձը նույնպես կարող է հասնել նույնական արդյունքի: Ավելին, անզեն ֆիզիկական բռնության յուրաքանչյուր դեպքում ոտնձգողն օգտագործում է իր մարմնի համապատասխան մասը (օրինակ՝ ձեռքը կամ ոտքը) որպես զենք, քանի որ դրա գործադրման արդյունքում կարող է պատճառվել մարդու մահ կամ առողջությանը վնաս, ինչը սակայն չի կարող գնահատվել որպես հանրային ավելի բարձր վտանգավորություն ունեցող արարք, քանի որ հասցված վնասը կամ դրա աստիճանն արդեն իսկ հաշվի են առնվում արարքի քրեաիրավական գնահատականի դեպքում հանցակազմի ընտրության ժամանակ, իսկ ըստ գործիքի ծանրացնող հանգամանքի առկայության համար անհրաժեշտ է ոչ միայն կիրառված գործիքի վնաս հասցնելու ունակությունը, այլ՝ օգտագործված գործիքի նաև լրացուցիչ չափանիշների բավարարելը, որոնցից են, օրինակ, համապատասխան առարկայի այնպիսի առանձնահատկությունները, որոնք խիստ բարձրացնում են կիրառման դեպքում հասցվող վնասի չափը, կամ էականորեն դյուրին են դարձնում ոտնձգողի նպատակին հասնելը և այլն: Վերոգրյալից զատ, կարևոր է հաշվի առնել որակյալ հանցակազմի էությունը որպես քրեաիրավական ինստիտուտ և մաս-

³ ՀՀ Վճռաբեկ դատարանի Ազատ Խլղայանի և Աշոտ Աթաբեկյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՏԴ/0085/01/14 որոշում

⁴ ՀՀ Վճռաբեկ դատարանի Հայկ Գալստյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0084/01/15 որոշում

նավորապես այն, որ եթե որոշակի հանցանքները, իրենց առանձնահատկություններից ելնելով, որպես կանոն կատարվում են գործիքով կամ որոշակի եղանակով, ապա այդ նույն գործիքով կամ եղանակով տվյալ հանցանքի կատարումը նախատեսել որպես որակյալ հանցակազմ հակադրվում է վերջինիս էությանը՝ հասարակ հանցակազմի առավել վտանգավոր, մասնավոր դրսևորում լինելուն: Օրինակ, սպանությունը խիստ հազվադեպ դեպքերում է կատարվում բացառապես ֆիզիկական ուժի գործադրմամբ, ուստի անհիմն է նախատեսել որպես սպանության որակյալ տեսակ գենքի կամ որևէ այլ գործիքի գործադրմամբ կատարված լինելն այն պարագայում, երբ նման դեպքերը գերակշռող մեծամասնությունն են և տվյալ հանցանքի իրագործման «նորման», իսկ առանց որևէ գործիքի կատարված սպանությունը, ընդհակառակը, հազվադեպ հանդիպող բացառությունը (2021 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 60 սպանության դեպք⁵, որից 47-ի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 42-ի դեպքում համապատասխան հակաիրավական արարքը կատարվել է գործիքով⁶):

2. Ներկա կարգավորումներ

2.1. ՀՀ քրեական նոր օրենսգիրք

ՀՀ Ազգային ժողովը 2021 թվականի մայիսի 5-ին ընդունեց ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ից և որում տեղ գտան մի շարք նորամուծություններ, հայեցակարգային փոփոխություններ և նոր կարգավորումներ՝ կոչված լրացնելու Նախկին օրենսգրքում եղած բացերը, վերացնելու թերությունները: Փոփոխություններից անմասն չի մնացել նաև խնդրո առարկա ծանրացնող հանգամանքը: Օրենսդիրը, պահպանելով վերաբերելի հանցակազմերի գերակշիռ մասի համար հանցանքի որոշակի գործիքով կատարված լինելու վերաբերյալ նույնական ծանրացնող հանգամանք ունենալու միտումը, 24 հանցակազմի ծանրացնող հանգամանք է նախատեսել համապատասխան արարքը **«գենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ»** կատարած լինելը: Դրանք են. առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելը (166-րդ և 167-րդ հոդվածներ), մարդուն առևանգելը (191-րդ հոդված), ազատությունից ապօրինի զրկելը (192-րդ հոդված), հոգեկան ներգործությունը (194-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը (198-րդ հոդված), ավազակությունը (252-րդ հոդված), խուլիգանությունը (297-րդ հոդված), պատանդ վերցնելը կամ պահելը (315-րդ հոդված), օդանավեր, նավեր կամ երկաթուղային շարժակազմեր զավթելը, պահելը կամ փախցնելը (316-րդ հոդված), պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը (452-րդ հոդված), պատիժն ի կատար ածող հիմնարկում կամ ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրերում իրականացվող գործունեությունը խոչընդոտելը (454-րդ հոդված), զորամաս կամ հատուկ պահպանվող զինվորական այլ տարածք ապօրինի մուտք գործելը

⁵ Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի գործունեության մասին հաղորդում https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (մուտք 06/08/2025)

⁶ Տես ԵՂ/1427/01/22, ԵՂ/1397/01/22, ԱՐԴ/0256/01/22, ԿՂ/0190/01/22, ԼԴ2/0023/01/22, ԵՂ/0729/01/22, ԱՎԴ/0070/01/22, ԵՂ/0126/01/22, ԱՎԴ/0115/01/21, ՇԴ/0246/01/21, ԵՂ/1792/01/21, ԵՂ/1740/01/21 ԵՂ/1516/01/21, ԵՂ/1446/01/21, ԵՂ/1399/01/21, ԼԴ/0129/01/21, ԵՂ/1255/01/21, ՇԴ/0153/01/21, ԱՎԴ/0086/01/21, ԵՂ/1080/01/21, ՇԴ/0112/01/21, ԱՎԴ/0027/01/21, ԱՐԴ/0115/01/21, ԱՎԴ/0019/01/21, ԵՂ/0670/01/21, ԵՂ/0591/01/21, ԱՎԴ/0025/01/22, ԵՂ/0625/01/22, ԵՂ/0374/01/22, ԿՂ/0075/01/22, ԵՂ/0283/01/22, ԵՂ/0133/01/22, ԵՂ/0193/01/22, ՍԴ/0012/01/22, ՍԴ/0013/01/22, ԱՎԴ/0043/01/22, ԵՂ/0589/01/22, ՍԴ/0046/01/22, ՇԴ/0055/01/22, ԳՂ/0011/01/22, ԱՎԴ/0032/01/22, ԱՐԴ/0080/01/22, ԼԴ2/0023/01/22, ԵՂ/1112/01/22, ԼԴ1/0008/01/22, ԼԴ2/0049/01/22, ԵՂ/1251/01/22 քրեական գործերը

(468-րդ հոդված), ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձին ապօրինաբար ազատելը (475-րդ հոդված), արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը (486-րդ հոդված), դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի նկատմամբ սպառնալիքը կամ նրանց մասին տեղեկություն հրապարակելը կամ նրանց գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելը (490-րդ հոդված), մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելը (492-րդ հոդված), մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ սպառնալիքը կամ նրա մասին տեղեկություն հրապարակելը կամ նրա գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելը (493-րդ հոդված), դատավարության մասնակիցների լիազորությունների իրականացումը խոչընդոտելը (495-րդ հոդված), արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի փախուստը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելը (506-րդ հոդված): Բացառություն են. ահաբեկչությունը (308-րդ հոդված), որի ծանրացնող հանգամանքը ենթադրում է համապատասխան արարքի կատարումը **զանգվածային ոչնչացման զենքի օգտագործմամբ**, պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը (441-րդ հոդված) և իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը (549-րդ հոդված), որոնց պարագայում հանրային առավել բարձր վտանգավորություն ունեցող է գնահատվել համապատասխան արարք(ներ)ը **զենք կամ հաբուկ միջոց օգտագործելով** իրականացնելը:

Միաժամանակ, Նոր օրենսգրքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ օրենսդիրն ամբողջությամբ հրաժարվել է **«որպես զենք օգտագործվող առարկա»** հասկացությունից, որը, ինչպես արդեն նշվել է, առարկաների չափազանց լայն շրջանակ էր ընդգրկում, ինչն իր հերթին խեղաթյուրում էր որակյալ հատկանիշի էությունը: Նման փոփոխությունը միանշանակ արդարացված է՝ առնվազն հանրային բարձր վտանգավորություն չունեցող կենցաղային-տնտեսական կամ այլ նշանակության առարկաների գործադրմամբ կատարված հանցանքներին քրեաիրավական անհամաչափ խիստ գնահատական տալը բացառելու համատեքստում: Օրենսդիրը, ՀՀ գործող քրեական օրենսդրության շրջանակներում որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք դիտարկելով կոնկրետ հանցանքը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելը, ի համեմատություն ՀՀ նախկին քրեական օրենսդրության, նեղացրել է վերոնշյալ որակյալ հատկանիշի բովանդակությունը: Մասնավորապես, եթե նախկինում արարքը ծանրացնող հանգամանքով որակելու համար ինքնին բավարար էր որպես զենք օգտագործվող առարկաների գործադրման փաստը, ապա կատարված փոփոխության պայմաններում, անհրաժեշտ է ոչ միայն հավաստել անձի կողմից համապատասխան առարկան կամ միջոցը գործադրելու, այլև դրանք մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու հանգամանքը⁷: Օրենսդրի վերոնշյալ մոտեցման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ հանցանքը նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելն է իրականում վկայում հանցավորի անձի բարձր վտանգավորության մասին, այլ ոչ թե պարզապես որպես զենք օգտա-

⁷ ՀՀ Վճռաբեկ դատարանի Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշում

գործվող առարկաների գործադրումը, երբ համապատասխան առարկան կարող է վերցվել նաև դեպքի վայրից⁸:

2.2. Զենք

Անդրադառնալով ներկա կարգավորմանը՝ հարկ է ընդգծել, որ ծանրացնող հանգամանքի բովանդակությունը վկայում է դրանով սահմանված երկու հիմնական խումբ գործիքների մասին՝ զենք հանդիսացող և այդպիսին չհանդիսացող: Նորմի առաջին մասը բլանկետային է, իսկ դրա էության ամբողջական բացահայտման համար անհրաժեշտ է դիմել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) օգնությանը: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ զենքն այն սարքն է կամ առարկան, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ խոցելու, վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար, իսկ արտաքին տեսքով կամ կառուցվածքով զենքին նմանվող առարկաները, սարքերը կամ գործիքները, որոնք ունեն արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային և դեկորատիվ նշանակություն, զենք չեն համարվում⁹: Օրենքը սահմանում է նաև զենքի տեսակները՝ քաղաքացիական, ծառայողական, մարտական և ենթատեսակները՝ գազային, սառը, նետողական, էլեկտրահարող և այլն: Ծանրացնող հանգամանքի տեքստում ընդհանրական «զենք» եզրույթի կիրառումը նշանակում է, որ Օրենքով սահմանված յուրաքանչյուր զենքի տեսակ ընդգրկված է ծանրացնող հանգամանքի շրջանակում: Որևէ առարկայի զենք հանդիսանալու հանգամանքը, իր հերթին, պետք է պարզվի համապատասխան փորձաքննության շրջանակներում (ձգաբանական, հետքաբանական և այլն)՝ հաշվի առնելով, որ նման հանգամանքի պարզման համար անհրաժեշտ են համապատասխան ոլորտի հատուկ գիտելիքներ: Ընդ որում, ի տարբերություն հաջորդիվ քննարկման առարկա դարձվող զենք չհանդիսացող գործիքների, զենքի պարագայում որևէ նշանակություն չունի՝ այն բերվել է նախօրոք, թե վերցվել է դեպքի վայրից: Հավասարապես, ծանրացնող հանգամանքով արարքը որակելու տեսանկյունից կարևոր չէ՝ զենքը որևէ փոփոխության ենթարկվել է, թե ոչ, այն օրինական հիմքերով է եղել այն գործադրած անձի մոտ, թե ոչ կամ այն, թե ինչ նպատակով է բերվել այդ զենքը կամ պահվել անձի մոտ: Ուստի, առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե հանցագործության գործիքն արդյո՞ք հանդիսանում է զենք, թե ոչ, և միայն բացասական պատասխան տալու դեպքում անդրադառնալ տվյալ գործիքի քննարկվող ծանրացնող հանգամանքի երկրորդ խումբ առարկաների թվին պատկանելու հարցին:

2.3. Զենք չհանդիսացող գործիքներ

Զենք չհանդիսացող գործիքների խումբն իր հերթին ևս բաժանված է երկու մասի՝ (1) մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկա կամ միջոց և (2) մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկա կամ միջոց: Ծանրացնող հանգամանքի էությունը վեր հանելու համար առաջնային նշանակություն ունի «պատրաստել» և «հարմարեցնել» հասկացությունների բացահայտումը: Վճռաբեկ դատարանը, *Ռուստամ Շավալյանի* վերաբերյալ գործով անդրադառնալով քննարկման առարկա ծանրացնող հանգամանքին մարդուն առևանգելու հանցակազմի շրջանակներում, դիրքորոշում է արտահայտել առ այն, որ առարկան կամ միջոցը **պատրաստել** ասելով՝ պետք

⁸ ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022 թվական

<https://moj.am/storage/uploads/%D5%94%D5%90%D4%B5%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%20%D5%86%D5%88%D5%90%20%D5%95%D5%90%D4%B5%D5%86%D5%8D%D4%B3%D5%90%D5%94%D4%BB%20%D5%88%D5%92%D5%82%D4%B5%D5%91%D5%88%D5%92%D5%85%D5%91.pdf> (մուտք 06/08/2025)

⁹ 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենք

է հասկանալ ցանկացած գործողություն, որի արդյունքում մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստի առարկա կամ միջոց է ստացվում կամ ստեղծվում: Ինչ վերաբերում է առարկան կամ միջոցը **հարմարեցնելուն**, ապա այն ենթադրում է հանցավորի կողմից արդեն իսկ գոյություն ունեցող առարկայի կամ միջոցի նկատմամբ որևէ ներգործության իրականացում՝ լրիվ կամ մասնակի կառուցվածքային փոփոխության ենթարկում, կարգավորում կամ ձևափոխում, որպեսզի դրանք առավել արդյունավետ կամ հարմար լինեն օգտագործման համար (օրինակ՝ մետաղյա ձողը կամ խոհանոցային դանակը սրելը, մետաղական մալուխն ընդհանուր զանգվածից կտրելով առանձնացնելը և այլն)¹⁰:

2.4. Պատրաստման կամ հարմարեցման նպատակը

Հարկ է նշել, որ օրենսդրի կողմից կարևորվել է համապատասխան առարկան կամ միջոցը պատրաստելու կամ հարմարեցնելու **նպատակը**: Այսպես, առարկան կամ միջոցը պատրաստված կամ հարմարեցված պետք է լինեն հատկապես մարմնական վնասվածք պատճառելու համար, իսկ այլ նպատակով որևէ առարկայի կամ միջոցի պատրաստումը, որը չի բացառվում, որ պիտանի է նաև մարմնական վնասվածք պատճառելու համար, չի կարող ընդգրկվել տվյալ ծանրացնող հանգամանքում: Նույնը վերաբերելի է նաև, ի թիվս այլնի, այն դեպքին, երբ մարմնական վնասվածք պատճառելու համար չպատրաստված որևէ առարկա կամ միջոց ենթարկվում է այնպիսի փոփոխության, որի արդյունքում տվյալ առարկան կամ միջոցն առավել արդյունավետ կամ հարմար են դառնում նաև մարմնական վնասվածք պատճառելու համար: Բացի այդ, առարկան մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված լինելու պահանջը բացառում է առանց որևէ փոփոխության որևէ այլ նպատակով պատրաստված առարկան ի հակառակ նպատակային նշանակության օգտագործման դեպքում քննարկվող ծանրացնող հանգամանքով որակումը, չնայած այն հանգամանքին, որ հնարավոր է, որ տվյալ գործիքը կարող էր պիտանի լինել նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկային հավասար կամ նույնիսկ առավել վնաս պատճառելու համար: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ ծանրացնող հանգամանքով նախատեսված առարկաների (բացառությամբ զենքի) գործադրման դեպքում օրենսդրի կողմից արարքի բարձր վտանգավորությունը պայմանավորվել է ոչ այնքան հանցագործության գործիքի վնաս հասցնելու օբյեկտիվ չափանիշներով, այլ հանցանքը կատարողի հանցավոր մտքով (դիտավորության ուղղվածությամբ):

Այսպես, անձի կողմից կենցաղային նշանակության, սակայն մարմնական վնասվածք պատճառելու համար բարձր պիտանիություն ունեցող առարկայով (օրինակ՝ բեյսբոլի մական) որևէ հանցանք կատարելը նվազ վտանգավոր է դիտարկվում նույն անձի կողմից մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես որևէ փոփոխության ենթարկված կենցաղային նշանակության և առաջին առարկայից մարմնական վնասվածք պատճառելու ունակության տեսանկյունից նվազ պիտանիություն ունեցող առարկայի (օրինակ՝ բռնակի ձևափոխմամբ հարմարեցված խոհանոցային փոքր դանակ) գործադրմամբ կատարված նույնական հանցանքից, քանի որ երկրորդ դեպքում գործ ունենք առավել զարգացված հանցավոր մտքի հետ, որն արտահայտվում է նրանում, որ անձը գիտակցում է հանցանք կատարելիս հատկապես մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստված կամ հենց այդ նպատակով հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրման փաստը, ինչն առկա չէ առաջին դեպքում և չի կարող առկա լինել, օրինակ, հանկարծակի ծագած դիտավորության դեպքում

¹⁰ ՀՀ Վճռաբեկ դատարանի Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշում

ձեռքի տակ ընկած առաջին պատահական առարկայով կատարված հանցանքների դեպքում:

2.5. Առարկան կամ միջոցը պատրաստված կամ հարմարեցրած անձը

Հաջորդիվ ենթակա է քննարկման այն հարցը, թե **ում կողմից** պետք է հարմարեցված կամ պատրաստված լինի համապատասխան առարկան կամ միջոցը: Քրեագետներ Դ. Ա. Թումասյանը և Կ. Հ. Հովհաննիսյանը պնդում են, որ օրենսդրական ձևակերպումը տարակարծության տեղիք է տալիս և պարզ չէ, թե ում կողմից պետք է նախապես պատրաստված կամ հարմարեցված լինի գործադրված առարկան, ցանկացած մեկի, թե հանցանքը կատարողի կողմից¹¹: Վերջիններս այն կարծիքի են, որ առկա օրենսդրական ձևակերպմամբ համապատասխան առարկան կամ միջոցը կարող է պատրաստված կամ հարմարեցված լինի նաև այլ անձի կողմից, սակայն պայմանով, որ այն պատրաստելիս կամ հարմարացնելիս գիտակցվում էր, որ այդ առարկան կամ միջոցը կիրառվելու է մարմնական վնասվածք պատճառելու համար¹²:

Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանը Ռուստամ Շավալյանի վերաբերյալ հիշատակված գործի շրջանակում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որակյալ է համարվում ոչ թե առարկայի կամ միջոցի պարզապես օգտագործումը, այլ մարմնական վնասվածք պատճառելու համար **որոշակի նախապատրաստական գործողությունների իրականացումը**, այն է՝ առարկան կամ միջոցը նախապես պատրաստելը կամ հարմարեցնելը: Այլ կերպ՝ արարքը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ է նախևառաջ ուշադրություն դարձնել հանցավորի սուբյեկտիվ ընկալմանը և **վերջինիս կողմից օբյեկտիվորեն իրականացված գործողությունների բնույթին**: Մասնավորապես, վերոնշյալ որակյալ հանգամանքն անձին մեղսագրելու համար, կարևոր է, որ **վերջինս** մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես **որոշակի ակտիվ գործողություններ իրականացնի, այն է՝ պատրաստի կամ հարմարեցնի համապատասխան առարկան կամ միջոցը**¹³» (ընդգծումները՝ հեղինակի): Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումից կարող է տպավորություն ստեղծվել, որ վերջինս բացառում է բացի հանցանքը կատարողից՝ որևէ այլ անձի կողմից համապատասխան առարկան կամ միջոցը պատրաստելու կամ հարմարեցնելու դեպքում ծանրացնող հանգամանքի առկայությունը, որպիսի դատողությունը, սակայն, ըստ իս, հիմնավոր չէ՝ հաշվի առնելով, որ նշված գործով Վճռաբեկ դատարանի կողմից քննարկման առարկա են դարձվել ոչ թե առարկան կամ միջոցը պատրաստող կամ հարմարեցնող անձանց շրջանակը և հանցավորից բացի այլ անձի կողմից առարկան կամ միջոցը պատրաստելու կամ հարմարեցնելու հնարավորությունը, այլ՝ **պատրաստված և հարմարեցված** հատկանիշների էությունը, ծանրացնող հանգամանքով արարքը որակելիս հանցավորի սուբյեկտիվ ընկալման նշանակությունը և այլն:

Այս առումով Դ. Ա. Թումասյանի և Կ. Հ. Հովհաննիսյանի մոտեցումը, ըստ իս, հիմնավոր է: Նախ, անհրաժեշտ է ընդգծել, որ եզրահանգումն առ այն, որ առարկան կամ միջոցը գործադրողն ինքը հենց պետք է նախապես որոշակի ակտիվ գործողություններ իրականացնի՝ պատրաստի կամ հարմարեցնի գործիքը, չի բխում օրենսդրական կարգավորումներից: Այսպես, Նոր օրենսգրքի 25-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ դիտավորյալ հանցագործության՝ օրենսգրքով նախատեսված ծանրացնող հանգամանքները մեղսագրվում են

¹¹ Դ. Ա. Թումասյան, Կ. Հ. Հովհաննիսյան, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս», Ոստումական ձեռնարկ, ISBN 978-9939-64-367-0, «Լիմուշ» հրատ., Երևան, 2022թ., էջ 253

¹² Ibid.

¹³ ՀՀ Վճռաբեկ դատարանի Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշում

անձին միայն այն դեպքում, երբ նա գիտակցել է այդ հանգամանքները: Ուստի, ինչպես յուրաքանչյուր, այնպես էլ քննարկվող ծանրացնող հանգամանքի մեղսագրման հիմքը հանցավորի կողմից դրա **գիտակցումն** է: Միևնույն ժամանակ, օրենսդրի կողմից կիրառված քննարկվող ծանրացնող հանգամանքի ձևակերպումը չի նշում առարկան կամ միջոցը պատրաստողին կամ հարմարեցնողին, ինչն ինքնանպատակ չէ և վկայում է ինքնին այդ հանգամանքը ծանրացնող հանգամանքի կիրառման տեսանկյունից չկարևորելու մասին: Հակառակ պարագայում, օրենսդրի կողմից ընդամենը մեկ բառի ավելացմամբ հստակ կամրագրվեր հանցանքը կատարողի կողմից գործադրված գործիքը նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու պահանջը, օրինակ, ծանրացնող հանգամանքը շարադրելով հետևյալ կերպ՝ «զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար **իր կողմից (անձամբ, հանցավորի կողմից)** նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ»: Մինչդեռ, գոյություն ունեցող կարգավորմամբ ծանրացնող հանգամանքի կիրառման համար առկա են հետևյալ պահանջները՝ (1) առարկան կամ միջոցը պետք է պատրաստված կամ հարմարեցված լինեն նախապես, (2) առարկան կամ միջոցը պետք է պատրաստված կամ հարմարեցված լինեն հատկապես մարմնական վնասվածք պատճառելու համար, (3) առարկան կամ միջոցը գործադրողը պետք է գիտակցի վերոնշյալ երկու հանգամանքները: Նշված երեք հանգամանքների միաժամանակյա առկայության դեպքում արարքը ենթակա է որակման ծանրացնող հանգամանքով՝ անկախ հանցագործության գործիքը պատրաստած կամ հարմարեցրած անձի ինքնությունից:

Վերոգրյալից բացի՝ հանցավորի կողմից առարկան կամ միջոցն անձամբ պատրաստելու կամ հարմարեցնելու պարտադիրության վերաբերյալ դիրքորոշումը հիմնավոր չի թվում նաև այն պատճառով, որ դրանով իմաստագրվում է հանցակցության ինստիտուտը: Այսպես, հանցակցության տեսակներից մեկն օժանդակությունն է, որը, ի թիվս այլնի, կարող է արտահայտվել հանցագործությանը նպաստելով միջոցներ կամ գործիքներ տրամադրելու եղանակով:

Նշված դիրքորոշմամբ առաջնորդվելու դեպքում ստացվում է մի իրավիճակ, երբ հանցավորի կողմից անձամբ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկայի կամ միջոցի գործադրմամբ որևէ հանցանք կատարելը քրեաիրավական առավել ծանր որակման է արժանի, քան նույն անձի կողմից՝ տվյալ հանցանքին օժանդակելու դիտավորությամբ, մարմնական վնասվածք պատճառելու համար այլ անձի կողմից պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարված նույն հանցանքը, ինչը խնդրահարույց է թվում: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև համակատարման դեպքերին, երբ, օրինակ, գործադրված առարկան կամ միջոցը պատրաստած կամ հարմարեցրած անձը ոչ թե վերջինս գործադրողն է, այլ տուժածի դիմադրությունը հաղթահարողը կամ օբյեկտիվ կողմի այլ գործողությունների միաժամանակյա կատարողը: Այնուամենայնիվ, հարկավոր է ընդգծել, որ ծանրացնող հանգամանքով որակման համար պարտադիր չէ, որ առարկան կամ միջոցը պատրաստած կամ հարմարեցրած անձը հանդիսանա հանցակից կամ ընդհանրապես իրազեկված լինի, թե կոնկրետ ինչ հանցանքի կատարման համար է գործադրվելու գործիքը: Հավասարապես, որոշ դեպքերում անգամ էական չէ՝ գործիքը գործադրած և այն պատրաստած կամ հարմարեցրած անձանց նպատակները համընկնում են, թե ոչ: Այսպես, ծանրացնող հանգամանքն առկա կլինի անգամ այն դեպքում, երբ առարկան կամ միջոցը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցվել կամ պատրաստվել է առանց կոնկրետ հանցանքի համար գործադրվելու մտադրության, ինչպես նաև այն դեպքում, երբ այն պատրաստվել կամ հարմարեցվել է մի

հանցանքի կատարման համար, իսկ գործադրվել՝ մեկ այլ հանցանքի կատարման ժամանակ:

2.6. Դեպքի վայրից վերցված գործիքի գործադրումը

Առանձին ուշադրության է արժանի նաև այն հարցը, թե կարող է արդյոք տվյալ ծանրացնող հանգամանքն առկա լինել այն դեպքում, երբ գործադրված առարկան կամ միջոցը վերցվել է դեպքի վայրից: Բարձրացված հարցը կբննարկվի զենքի և զենք չհանդիսացող գործիքների տարբերակված իրավիճակների տեսանկյունից: Առաջին խումբ գործիքների դեպքում հարցի պատասխանը կարծես տարակուսանք չի առաջացնում՝ զենքի գործադրման պարագայում որևէ նշանակություն չունի՝ այն վերցվել է դեպքի վայրից, թե բերվել է նախապես կամ այն, թե բերվել է զենքն այն գործադրողի կողմից, թե ոչ, յուրաքանչյուր դեպքում զենքի գործադրումն արդեն իսկ բավարար է ծանրացնող հանգամանքի առկայությունը փաստելու համար:

Իրավիճակն ավելի խնդրահարույց է երկրորդ խումբ գործիքների դեպքում: Տվյալ հարցի վերաբերյալ մասնագետների մոտեցումները միասնական չեն: Հեղինակների մի մասը գտնում է, որ նշված առարկաները կամ միջոցները հանցանքը սկսելուց հետո այն կատարելու վայրում վերցնելը կամ հարմարեցնելը (օրինակ՝ ապակյա շիշը կոտրելը) և գործադրելը չի կարող առաջացնել համապատասխան հոդվածով նախատեսված ծանրացնող հանգամանքը¹⁴: Տվյալ տեսակետն են, ըստ էության, պաշտպանում նաև ուղեցույցի հեղինակները՝ ընդգծելով, որ դեպքի վայրից վերցրած առարկայով պատճառված վնասը կորակվի ըստ փաստացի առաջացած հետևանքի¹⁵:

Հեղինակների մյուս մասի կարծիքով ծանրացնող հանգամանքի համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե որքան շուտ է այդ առարկան կամ միջոցը պատրաստվել կամ հարմարեցվել՝ այն կարող է լինել վաղօրոք կամ անգամ դեպքի վայրում որևէ առարկա կամ միջոց հարմարեցնելով: Օրինակ՝ ապակու շիշը կոտրելով՝ կոտրանք ստեղծելը համարվում է հիմք քննարկվող ծանրացնող հանգամանքը մեղսագրելու համար¹⁶:

Այս առումով հատկանշական է, որ կատարված օրենսդրական փոփոխությունները միտված չեն եղել դեպքի վայրից վերցված որևէ առարկայի գործադրման դեպքում որակյալ հատկանիշով որակումն անպայմանորեն բացառելուն, թեև գործադրվող գործիքի վերաբերյալ սահմանված լրացուցիչ պահանջներն էականորեն նվազեցրել են դեպքի վայրից վերցված առարկայի վերջիններիս համապատասխանելու հավանականությունը:

Մինչ բարձրացված հարցին պատասխանելը, հարկ է ընդգծել, որ հնարավոր են դեպքի վայրից վերցված առարկայի գործադրման տարբեր իրավիճակներ, որոնցից յուրաքանչյուրի դեպքում առաջ քաշված հարցի պատասխանը տարբերվելու է: Այսպես, անհրաժեշտ է տարանջատել այն դեպքը, երբ գործադրվում է փոփոխության չենթարկված առարկան կամ միջոցն այն իրավիճակից, երբ մինչ գործադրումը տվյալ առարկան կամ միջոցը ենթարկվում է փոփոխության: Առաջին դեպքում, երբ ոտնձգողն **անծանոթ** առարկան կամ միջոցը վերցնում

¹⁴ Ս. Վ. Առաքելյան, Ա. Վ. Բարսեղյան, «Մարդու դեմ ուղղված հանցագործություններն՝ ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի», Գիտագործնական մեկնաբանություններ, ISBN 978-9939-9240-7-6, Արդարադատության ակադեմիա, 2023թ., էջ 120

¹⁵ ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022 թվական

<https://moj.am/storage/uploads/%D5%94%D5%90%D4%B5%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%20%D5%86%D5%88%D5%90%20%D5%95%D5%90%D4%B5%D5%86%D5%8D%D4%B3%D5%90%D5%94%D4%BB%20%D5%88%D5%92%D5%82%D4%B5%D5%91%D5%88%D5%92%D5%85%D5%91.pdf> (մուտք 06/08/2025)

¹⁶ Դ. Ա. Թումասյան, Գ. Թ. Գրիգորյան, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս երեք հատորներում», Հատոր առաջին, Ոստմնական ձեռնարկ, ISBN 978-9939-64-400-4, «Լիմուշ» հրատ., Երևան, 2025թ., էջ 412

է դեպքի վայրից և միանգամից օգտագործում է, ծանրացնող հանգամանքը բացակայում է, քանի որ պահպանված չէ նախապես հարմարեցված կամ պատրաստված լինելու պահանջը (անգամ եթե տվյալ առարկան կամ միջոցը նախապես պատրաստված կամ հարմարեցված էր մարմնական վնասվածք պատճառելու համար, հանցավորը չի գիտակցում այդ հանգամանքը): Իրավիճակն այլ է այն պարագայում, երբ ոտնձգողը դեպքի վայրից վերցնում է մի առարկա, որն իրեն հայտնի է, որ նախապես պատրաստված կամ հարմարեցված է մարմնական վնասվածք պատճառելու համար (օրինակ՝ առարկան հանցակցի կողմից հատուկ թողնվել է դեպքի վայրում՝ պայմանավորվածության համաձայն այն օգտագործելու նպատակով): Նկարագրված դեպքում ծանրացնող հանգամանքն առկա է:

Երկրորդ իրավիճակի դեպքում ծանրացնող հանգամանքի առկայությունն ուղղակիորեն փոխկապակցված է հարմարեցման ժամանակագրական պահի պարզման և ծանրացնող հանգամանքը սահմանող իրավադրույթում առկա «նախապես» եզրույթի իմաստի բացահայտման հետ: Նախ և առաջ անհրաժեշտ է արձանագրել, որ օրենսդրի կողմից ծանրացնող հանգամանքի տեքստում «նախապես» հասկացության ներառումը վկայում է համապատասխան առարկայի կամ միջոցի հարմարեցման կամ պատրաստման ժամանակագրական սահմանների մասին: Այլ կերպ ասած, միայն սահմանված ժամկետում պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրումը կարող է հանգեցնել ծանրացնող հանգամանքով որակման: Ուստի, անհրաժեշտ է պարզել, թե կոնկրետ ինչին է վերաբերում «նախապես»-ը՝ ինչից առաջ պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի: Այս առումով քրեաիրավական նշանակություն ունեցող ժամանակագրական պահերից կարելի է առանձնացնել առարկայի կամ միջոցի գործադրման պահը, ինչպես նաև հանցանքը սկսելու պահը:

Առաջինի պարագայում հանգելու ենք այն խնդրին, թե ինչ նպատակ է հետապնդում օրենսդրորեն ժամանակագրական սահմանափակման նախատեսումը, եթե վերջինս վերաբերում է գործիքի գործադրմանը: Նկատի ունենալով, որ գործադրումից հետո գործիքի ցանկացած փոփոխություն չի կարող ունենալ որևէ քրեաիրավական նշանակություն՝ ստացվում է, որ գործիքը նկարագրող յուրաքանչյուր հանգամանք արդեն իսկ կարող է վերաբերել միայն գործադրմանը նախորդող ժամանակահատվածին, իսկ հակառակ դեպքում այն առարկայազուրկ է: Այլ կերպ ասած, սահմանումը, որ առարկան կամ միջոցը պետք է լինեն որոշակի նպատակով պատրաստված կամ հարմարեցված արդեն իսկ իմպլիցիտ ենթադրում է, որ օբյեկտը տվյալ հատկանիշներով պետք է օժտված լինի մինչև գործադրումը: Վերոգրյալի մասին է վկայում այն, որ «նախապես» բառն օրենսդրական կարգավորումից հանելու դեպքում անգամ համապատասխան առարկան կամ միջոցը պետք է հարմարեցված կամ պատրաստված լինեին մինչև գործադրումը, որպիսի մեկնաբանումը «նախապես» եզրույթի ներառումը դարձնում է ինքնանպատակ, որն իր հերթին վկայում է դրույթի սխալ մեկնաբանման մասին:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդրական ժամանակագրական սահմանափակումը վերաբերում է հանցանքը սկսելու պահին, ինչից բխում է, որ հանցանքը սկսելուց հետո մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված կամ պատրաստված առարկայի կամ միջոցի գործադրումը չի կարող առաջացնել խնդրո առարկա ծանրացնող հանգամանքը (օրինակ՝ անձը խուլիգանության օբյեկտիվ կողմի գործողությունները սկսելուց հետո դեպքի վայրից վերցնում է շիշ, ապա կոտրման եղանակով հարմարեցնում այն մարմնական վնասվածք պատճառելուն և դրա գործադրմամբ շարունակում խուլիգանության իրականացումը): Նույնությամբ, եթե հանցանքի կատարումը բաղկացած է մի քանի փոխկապակցված արարքներից, ապա ծանրացնող հանգամանքն առկա կլինի միայն այն դեպքում, եթե առարկան կամ

միջոցը հարմարեցվել կամ պատրաստվել է մինչև առաջին արարքի կատարումը, քանի որ հակառակ պարագայում առարկայի կամ միջոցի հարմարեցումը կամ պատրաստումը չի լինի իրականացված **նախապես**: Օրինակ, եթե արդեն իսկ սկսված փոխադարձ կռվի ժամանակ անձը շիշը կոտրելու եղանակով հարմարեցնի և դրանով հարված հասցնի, հարմարեցումը չի լինի կատարված նախապես, քանի որ դրան նախորդել է փոխկապակցված այլ արարքի կատարումը՝ փոխադարձ կռվի շրջանակներում այլ բռնության գործադրումը և հետևաբար ծանրացնող հանգամանքն առկա չի լինի: Միևնույն ժամանակ, հանցանքը սկսելուց առաջ գործիքի պատրաստումը կամ հարմարեցումը, անկախ դրանց միջև առկա ժամանակագրական խզման տևողությունից, բավարարում է «նախապես»-ի օրենսդրական պահանջին, ուստի հիմք է ծանրացնող հանգամանքի մեղսագրման համար (օրինակ՝ անձը մեկ ուրիշի առողջությանը վնաս պատճառելու դիտավորությամբ վերցնում է վերջինիս ձեռքին առկա ապակյա շիշը, կոտրելու եղանակով հարմարեցնում այն մարմնական վնասվածք պատճառելուն, ապա կոտրանքով հարված հասցնում):

Համադրելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ դեպքի վայրից մինչև հանցանքը սկսելը վերցված և ապա մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված գործիքի գործադրումն առաջացնում է ծանրացնող հանգամանք, իսկ հանցանքը սկսելուց հետո դեպքի վայրից վերցված, ապա մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված գործիքի գործադրումը՝ ոչ:

Հատուկ ուշադրության է արժանի այն, որ տվյալ համատեքստում հանցանքը սկսել ասելիս պետք է հասկանալ հանցագործության օբյեկտիվ կողմի գործողությունները սկսելը, այլ ոչ թե հանցագործության նախապատրաստությունը՝ հաշվի առնելով, որ այն ներառում է նաև դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք պատրաստելը կամ այն հարմարեցնելը, ինչն անհնարին կդարձնե մինչև հանցանքը սկսելը, այսինքն՝ նախապես, մարմնական վնասվածք պատճառելու համար առարկա կամ միջոց պատրաստելը կամ հարմարեցնելը, քանի որ պատրաստման կամ հարմարեցման յուրաքանչյուր գործողություն արդեն իսկ կվկայեր հանցանքի առաջին փուլի սկսված լինելու մասին:

2.7. Ոչ պիտանի զենքի կամ զենքին նմանվող առարկայի գործադրումը

Սույն հոդվածի շրջանակում քննարկման արժանի է նաև այն հարցը, թե կարող է արդյոք զենքին նմանվող առարկայի գործադրումը հանգեցնել ծանրացնող հանգամանքին, թե ոչ:

Վերոգրյալ հարցի շուրջ, Նախկին օրենսգրքի գործողության պայմաններում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ՝ «բոլոր այն դեպքերում, երբ հանցավորը գիտակցում է, որ (...) սպառնում է ոչ պիտանի զենքով կամ զենքին նմանվող առարկայով (զենքի նմանակում՝ խաղալիք դաշույն, ատրճանակի մակետ և այլն), հնարավորություն չունենալով դրանցով տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր վնաս հասցնել, ապա հանցավորի գործողությունները չեն կարող որակվել զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ (...): Ասվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ հանցավորը գործադրում է այնպիսի առարկա (օրինակ՝ մետաղից պատրաստված ատրճանակի մակետ), որով ինքնին հնարավոր է տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր վնաս հասցնել»:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումը պայմանավորված էր նրանով, որ անգամ զենքին չնմանեցված մետաղի կտորի գործադրումն ինքնին բավարար էր ծանրացնող հանգամանքի գոյության համար, քանի որ այն բավարարում էր «որպես զենք օգտագործվող առարկա» հատկանիշին՝ մարդու առողջությանը վնաս կամ անձին մահ պատճառելու իր ունակությամբ, ուստի չկա որևէ պատճառ, որ ոչ պիտանի զենքը կամ զենքին նմանեցված առարկան նույնպես չհամարվի «որպես զենք օգտագործվող առարկա», եթե բավարարում է

հատկանիշի նշված պահանջին:

Որպես զենք օգտագործվող առարկա հասկացությունից հրաժարումը և ծանրացնող հանգամանքի գործողության շրջանակի էական նվազեցումը բնականաբար ենթադրում է, որ ներկա կարգավորումների պայմաններում ևս մարդու առողջությանը վնաս կամ մահ պատճառելու հնարավորություն չտվող ոչ պիտանի զենքի կամ զենքին նմանվող առարկայի գործադրումը չի կարող առաջացնել ծանրացնող հանգամանքով արարքի որակմանը:

Այուս կողմից, իրավիճակն այլ է մարդու առողջությանը վնաս կամ մահ պատճառելու հնարավորություն տվող ոչ պիտանի զենքի կամ զենքին նմանվող առարկայի գործադրման առնչությամբ: Այսպես, թեև Նախկին օրենսգրքի պայմաններում նշված առարկաների գործադրումը բավարար էր ծանրացնող հանգամանքի առկայության համար, քանի որ դրանցով կարող էր մարդու առողջությանն առնվազն վնաս պատճառվել, ներկայիս կարգավորումների պարագայում առկա են լրացուցիչ պահանջներ: Ինքնըստինքյան բացառելով նշված առարկաների օրենսդրությամբ սահմանված զենքին ներկայացվող պահանջներին բավարարելու հնարավորությունը՝ ծանրացնող հանգամանքի առկայությունը պետք է քննարկել մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի համատեքստում: Խոսելով մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի մասին՝ հարկ է շեշտել, որ ինքնին չի բացառվում, որ, ի թիվս այլնի, զենքի մակետը պատրաստված լինի նախապես մարմնական վնասվածք պատճառելու նպատակով կամ որ խաղալիք դաշույնը հարմարեցվի (օրինակ՝ հալեցնելու և սրելու եղանակով) մարմնական վնասվածք պատճառելու համար, ուստի նման առարկաների գործադրմամբ կատարված արարքների դեպքում ծանրացնող հանգամանքի մեղսագրման հարցը պետք է լուծվի ընդհանուր կանոններով: Արդյունքում, եթե զենքին նմանվող առարկան կամ ոչ պիտանի զենքը ենթարկվել են ֆունկցիոնալ փոփոխությունների, որոնք նպատակաուղղված են եղել մարմնական վնասվածք պատճառելու տվյալ գործիքի ունակության բարձրացմանը կամ եթե զենքի մակետը կամ նման այլ առարկան պատրաստվել է անմիջապես մարմնական վնասվածք պատճառելու համար, ապա դրանց գործադրումը կառաջացնի ծանրացնող հանգամանքը, իսկ փոփոխության չենթարկված և հիմնական (մարմնական վնասվածք պատճառելուց տարբերվող որևէ այլ) նշանակությամբ պատրաստված զենքի մակետի կամ խաղալիքի կամ այլ նման առարկայի գործադրումը, եթե անգամ տվյալ առարկան պիտանի է մարդու առողջությանը վնաս կամ մահ պատճառելու համար, չի կարող որակվել ծանրացնող հանգամանքով:

2.8. Գործադրում հասկացությունը

Տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների համատեքստում ոչ նվազ կարևոր է նաև այն հարցի պարզումը, թե ինչ է պետք հասկանալ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկայի կամ միջոցի **գործադրում** ասելով:

Ինչպես արդեն իսկ նշվել է նախորդիվ, Նախկին օրենսգրքի կարգավորումների շրջանակներում Վճռաբեկ դատարանն արտահայտել էր այն իրավական դիրքորոշումը, որ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրում ասելով պետք է հասկանալ կամ նշված առարկաների **փաստացի գործադրումը** (օրինակ՝ կրակոց արձակելը, հարվածներ հասցնելը և այլն), կամ **գործադրման փորձը** (դիտավորյալ գործողություններ, որոնք, սակայն, հանցավորի կամքից անկախ հանգամանքներում չեն հաջողվում), կամ **դրա սպառնալիքը** (զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկաները ցուցադրելու կամ այլ եղանա-

կով)¹⁷:

Այս առումով հատկանշական է, որ Նախկին օրենսգիրքը բացառությամբ բռնաբարության (138-րդ հոդված) և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139-րդ հոդված) բոլոր հանցակազմերում ծանրացնող հանգամանքը շարադրում էր որպես համապատասխան գործիքի «գործադրմամբ» կատարված, առանց ներառելու դրա սպառնալիքը, ինչը, ըստ էության լրացվել է Վճռաբեկ դատարանի դատական մեկնաբանման շնորհիվ՝ նշված որոշմամբ արտահայտված դիրքորոշմամբ: Խոսքը, ի թիվս այլնի, վերաբերում է նաև խուլիգանությանը (258-րդ հոդված), որի կապակցությամբ իսկ Վճռաբեկ դատարանն արտահայտել է տվյալ դիրքորոշումը:

Իր հերթին, Նոր օրենսգիրքը հանցակազմերի մի մասի դեպքում նախատեսում է ծանրացնող հանգամանքը որպես համապատասխան գործիքի «գործադրմամբ» կատարված, իսկ մյուս մասի դեպքում, բացի գործադրումից, ուղղակիորեն շեշտված է նաև «գործադրման սպառնալիքը»: Առաջին խումբը ներառում է **166-րդ, 167-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 252-րդ, 315-րդ, 316-րդ, 452-րդ, 454-րդ, 468-րդ, 475-րդ, 486-րդ, 490-րդ, 492-րդ, 493-րդ, 495-րդ, 506-րդ, 518-րդ, 519-րդ, 520-րդ, 521-րդ** հոդվածները, իսկ երկրորդ խումբը՝ **198-րդ և 297-րդ** հոդվածները: Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքը, որ առաջին խմբի մի շարք հանցակազմերի դեպքում ևս համապատասխան հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը ենթադրում է ինչպես բռնության, այդ թվում նաև՝ զենքով կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված գործիքով, գործադրումը, այնպես էլ դրա սպառնալիքը (օրինակ՝ մարդուն առևանգելը կամ ավազակությունը): Օրենսդրի նման տարանջատումը, ըստ իս, չի կարող անտեսվել գործադրում հասկացության մեկնաբանման ժամանակ, որն առերևույթ վկայում է օրենսդրի կամքը՝ գործադրում և գործադրման սպառնալիք հասկացությունների առանձնացման առումով հստակ տարանջատում սահմանելուն: Հակառակ մոտեցման դեպքում, որևէ հանցակազմի պարագայում ծանրացնող հանգամանքով չէր նախատեսվի գործիքի գործադրումից բացի՝ նաև դրա գործադրման սպառնալիքը. չէ որ այն ի սկզբանե ներառված է առաջինի մեջ:

Պետք է ընդունել, որ նման մեկնաբանումը քրեաիրավական տեսանկյունից լավագույնը չէ, քանի որ, ի տարբերություն, օրինակ, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելուն, մի շարք հանցակազմերի դեպքում համապատասխան հանցանքի օբյեկտիվ կողմի կատարման եղանակ է ինչպես զենքի կամ այլ առարկայի գործադրումը, այնպես էլ դրա սպառնալիքը (օրինակ՝ ավազակություն), իսկ փաստացի գործադրման և սպառնալիքի դեպքերում տարբերակված քրեաիրավական գնահատական տալը չունի որևէ հիմք՝ հաշվի առնելով հանրային վտանգավորության նույն աստիճանը:

Այնուամենայնիվ, պետք է շեշտել, որ օրենսդրական դրույթի մեկնաբանումը չի կարող կառուցված լինել բացառապես նախընտրելի իրավական կարգավորումներ ունենալու հենքի վրա՝ անտեսելով հստակ արտահայտված օրենսդրի կամքը և իրավադրույթի շարադրանքը: Ասվածը հատկապես կարևոր է քրեական իրավունքի դեպքում, որի պարագայում գործում է օրինականության սկզբունքը, որը մի կողմից արգելում է քրեական օրենքի Հատուկ մասի նորմերի անալոգիայով կիրառումը, իսկ մյուս կողմից՝ իրավադրույթների տարածական մեկնաբանումը, որն իր հերթին ենթադրում է նորմերի խիստ մեկնաբանում, ինչն էլ կոչված է պաշտպանելու անձանց՝ որոշակիության սկզբունքի խստագույն պահպանմամբ: **Ոչ մի պա-**

¹⁷ ՀՀ Վճռաբեկ դատարանի Ազատ Խլղաթյանի և Աշոտ Աթաբեկյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՏԴ/0085/01/14 որոշում

րագայում անալոգիան չի կարող կիրառվել հանցակազմերի ձևակերպման ժամանակ տեղ գտած բացերը կամ թերությունները վերացնելու նպատակով¹⁸: Նշված սկզբունքից բացառություն չի թույլատրվում անգամ այն դեպքում, երբ օրենսդրի իրավադրույթի ուղիղ նշանակությունից տարբերվող կարգավորում նախատեսելու կամքը վեր է որևէ կասկածից:

Վերոգրյալը վերահաստատվել է նաև Վճռաբեկ դատարանի կողմից, որը *Սարգիս Գրիգորյանի* վերաբերյալ գործի¹⁹ շրջանակներում, վերահաստատելով «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունքի կարևորությունը, արձանագրել է, որ արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն **իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով**, ինչը ենթադրում է, որ անձը համապատասխան դրույթի տառացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների տված մեկնաբանությունից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախատեսվում, և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար: Անդրադառնալով դատական մեկնաբանության սահմաններին և օրենսդրական բացի հաղթահարման հիմնախնդրին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ օրենքի՝ **իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի**: ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմում առկա **օրենսդրական բացը չի կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինականության սկզբունքի անքակտելի փարրն է քրեական օրենքը փարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքը**: Վերոնշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե հանցակազմի պարտադիր հատկանիշը սահմանող հասկացության բովանդակության **բացահայտումը կախված չէ գործի կոնկրետ հանգամանքներից, կարող է սահմանվել դրանցից վերացարկված, սակայն սահմանված չէ օրենքով, դատարանը, չունենալով գնահատման օբյեկտիվ չափանիշներ, զրկված է դրանք մեկնաբանելու հնարավորությունից**:

Համադրելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ զենքի կամ այլ գործիքի «գործադրում» հասկացության էության բացահայտումը պայմանավորված չէ գործի կոնկրետ հանգամանքներով, և օբյեկտիվորեն կարող է սահմանվել դրանցից վերացարկված: Միևնույն ժամանակ, օրենսդրի կողմից տարբեր հանցակազմերի պայմաններում, որոնք ծանրացնող հանգամանքի կիրառման վերաբերելի մասով չունեն որևէ էական տարբերություն, մի դեպքում լրի **գործադրում**, իսկ մյուս դեպքում՝ **գործադրում և գործադրման սպառնալիք** հասկացությունները նախատեսելը զրկում է իրավակիրառին, այդ թվում նաև՝ դատարաններին, անտեսելով էքսպլիցիտ տարբերակված կարգավորումները, հանցակազմերի ձևակերպման ժամանակ տեղ գտած բացերը կամ թերությունները վերացնելու նպատակով, մեկնաբանել գործադրում հասկացությունը որպես նաև գործադրման սպառնալիք, և այդ կերպ լրացնել օրենսդրական բացը:

¹⁸ ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022 թվական

<https://moj.am/storage/uploads/%D5%94%D5%90%D4%B5%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%20%D5%86%D5%88%D5%90%20%D5%95%D5%90%D4%B5%D5%86%D5%8D%D4%B3%D5%90%D5%94%D4%BB%20%D5%88%D5%92%D5%82%D4%B5%D5%91%D5%88%D5%92%D5%85%D5%91.pdf> (մուտք 06/08/2025)

¹⁹ ՀՀ Վճռաբեկ դատարանի Սարգիս Գրիգորյանի վերաբերյալ գործով 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ ՀԿԴ/0054/01/22 որոշում

Ամփոփելով վերոգրյալը՝ նախևառաջ անհրաժեշտ է ընդգծել, որ գենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկայի կամ միջոցի գործադրումը չի ներառում գործադրման սպառնալիքը: Երկրորդ, այն բոլոր հանցակազմերի պարագայում, որոնցով ծանրացնող հանգամանքը ներառում է բացառապես համապատասխան գործիքի գործադրումը, եթե հանցավորի կողմից գենքը կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկան կամ միջոցն օգտագործվել են ոչ թե փաստացի գործադրման կամ դրա փորձի, այլ սպառնալիք հասցնելու համար, ծանրացնող հանգամանքը չի կարող առկա լինել: Հաջորդիվ, հարկ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանի՝ Նախկին օրենսգրքի գործողության պայմաններում արտահայտած դիրքորոշումն առ այն, որ գործադրում ասելով պետք է հասկանալ նաև դրա սպառնալիքը, հիմնավոր չէ:

Վերոգրյալից, ըստ իս, միանշանակ բխում է նաև օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը (անկախ նրանից, թե առկա կարգավորումն օրենսդրական բացի արդյունք է, թե օրենսդրի պերճախոս լռության դրսևորում), որը կամ պետք է արտահայտվի համապատասխան հանցակազմերի ծանրացնող հանգամանքում առարկայի «գործադրումից» բացի նաև «գործադրման սպառնալիք» եզրույթի լրացմամբ, կամ խուլիզանության և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ հանցակազմերի ծանրացնող հանգամանքից «գործադրման սպառնալիք» հասկացության վերացմամբ:

2.9. Իրավակիրառ պրակտիկա

Վերաբերելի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական հետապնդման մարմինների կողմից գրեթե բոլոր այն ենթադրյալ հանցանքները, որոնք իրականացվել են որևէ գործիքի գործադրմամբ, որը դեպքի վայրից չի վերցվել, որակվել են խնդրո առարկա ծանրացնող հանգամանքով: Ընդ որում, հիմնականում խոսքը գնում է չնույնականացված գործիքների մասին (օրինակ՝ ծալովի դանակ) առանց որևէ լրացուցիչ փաստական տվյալների դրա պատրաստման կամ հարմարեցման վերաբերյալ: Բացի դրանից՝ ակներև է իրավակիրառի միտումը «նախապես հարմարեցված» եզրույթի տակ հասկանալ նաև համապատասխան գործիքը **նախապես վերցնելը**: Օրինակ, ԵԴ1/3076/01/24 քրեական գործով²⁰ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (այսուհետ՝ Դատարան) Ն. Շ.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարելու մեջ վերջինիս կողմից կատարված այն արարքի համար, որ Ն. Շ.-ն վիճաբանել է անչափահասի Ա-ի հետ, որի ընթացքում իր մոտ գտնվող, **մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկայով՝ դանակով** երկու անգամ հարվածել է Ա-ին՝ առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս: Սույն գործով հատկանշական են նախ այն, որ հանցագործության գործիքը չի հայտնաբերվել քննությամբ, իսկ այն նախապես հարմարեցված է համարվել բացառապես այն պատճառով, որ գործադրած անձն այն **վերցրել էր նախապես**: Նման մեկնաբանումը, ըստ իս, հիմնովին հակասում է թե՛ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ընդունված ծանրացնող հանգամանքի ներկա կարգավորման բառացի տեքստին, թե՛ էությանը: Ավելին, քրեական հետապնդման մարմինների քրեաիրավական գնահատականը և այն հաստատող Դատարանի դատավճիռը հակասում են նաև Վճռաբեկ դատարանի *Ռուստամ Շավալյանի* գործով արտահայտած դիր-

²⁰ Տե՛ս ԵԴ1/3076/01/24 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2025 թվականի փետրվարի 21-ի դատավճիռը

քորոշմանը: Ավելորդ է ասել, որ ծանրացնող հանգամանքի նման մեկնաբանմամբ գործերը բազմաթիվ են²¹:

Մի շարք դեպքերում²² քրեական հետապնդման մարմինները քննությամբ չհայտնաբերված և չնույնականացված **դանակը per se** գնահատել են որպես մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկա:

Մեկ այլ դեպքում²³, քրեական հետապնդման մարմինների համար ծանրացնող հանգամանքի մեղսագրման, իսկ Դատարանի համար անձին մեղսագրված արարքը կատարած լինելու մեջ մեղավոր ճանաչելու համար բավարար է եղել ընդամենն այն, որ վնասը պատճառվել է սուր կտրող-ծակող գործիքով, որը ոչ միայն չի հայտնաբերվել քննությամբ, այլ որի անգամ տեսակը պարզված չի եղել (այսինքն չի բացառվում, որ վնասը կարող էր հասցված լինել ամենահասարակ կենցաղային առարկա հանդիսացող խոհանոցային դանակով): Հատկանշական է, որ տվյալ դեպքում անգամ անձին ներկայացված մեղադրանքը չի պարունակում որևէ նշում ենթադրյալ հանցանքի գործիքի զենք կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկա կամ միջոց հանդիսանալու մասին, թեև արարքը որակվել է այդ ծանրացնող հանգամանքով:

Պրակտիկան անմասն չի մնացել նաև այնպիսի դեպքերից²⁴, երբ հանցագործության գործիքն իրավակիրառի կողմից միաժամանակ գնահատվել է մարմնական վնասվածք պատճառելու համար և պատրաստված, և հարմարեցված: Մեկնաբանման նման **ապահով** տարբերակը, ըստ իս, հակադրվում է կարգավորման էությանը, որը հանգում է նրան, որ մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված կարող է լինել ոչ այդ նպատակով պատրաստված առարկան կամ միջոցը, եթե ենթարկվի համապատասխան փոփոխությունների: Մինչդեռ, մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկան արդեն իսկ ստեղծման պահից հարմարեցված է մարմնական վնասվածք պատճառելու համար, ուստի այլևս չի կարող խոսք գնալ առանձին հարմարեցված լինելու մասին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի թիվ **ԵԴ1/1257/01/23** քրեական գործով դատավճիռը²⁵, որը խնդրո առարկա ծանրացնող հանգամանքի համապարփակ մեկնաբանման առաջին դատական օրինակներից է: Տվյալ գործով Ն. Ե.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով Հ. Հ.-ին մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ ձեռքերով և **իր հեղ նախապես վերցրած դանակով** հարվածներ է հասցնելու և վերջինիս առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Հիշյալ ակտով, Դատարանը, նախ իրավացիորեն արձանագրել է, որ քննարկվող հանցակազմի տեսանկյունից մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված հատկանիշները զենքին վերաբերելի չեն, այնուհետև, Դատարանն ընդգծել է, որ օրենսդրի կողմից վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի գործադրումը որպես հանցակազմի որակյալ հատկանիշ դիտարկելը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձն իր հանցավոր գործողություններն ավելի արդյունավետ կատարելու համար օգտագործում է նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկա, միջոց, որպիսի հանգամանքն իր հերթին վտանգավորության

²¹ Տե՛ս, ի թիվս այլնի, ԼԴ/0518/01/24, ԵԴ1/3428/01/24, ԵԴ1/3333/01/24, ԵԴ1/1357/01/25 քրեական գործերը

²² Տե՛ս, ի թիվս այլնի, ԵԴ1/3814/01/24, ԵԴ1/3942/01/24, ՍԴ3/0130/01/24, ԵԴ1/3265/01/24 քրեական գործերը

²³ Տե՛ս ԵԴ1/3808/01/24 քրեական գործը

²⁴ Տե՛ս ԵԴ1/3265/01/24 քրեական գործը

²⁵ Տե՛ս ԵԴ1/1257/01/23 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռը

աստիճանով ավելի բարձր է բոլոր այն իրավիճակներից, երբ անձն իր հանցավոր գործողությունները կատարում է ոչ այդ նպատակով նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայով: Այլ խոսքով, ըստ Դատարանի՝ օրենսդիրը նշված ծանրացնող հանգամանքը նախատեսել է՝ առավելապես հաշվի առնելով նաև այն, թե հանցավորն ինչպիսի **նախապատրաստական աշխարհներ է ձեռնարկում** հանցանքը կատարելու համար, հակառակ պարագայում օրենսդիրն ուղղակիորեն կարող էր հրաժարվել և չգործածել «նախապես» եզրույթը, որն ըստ էության լրացուցիչ չափանիշ է սահմանում բոլոր այն իրավիճակների համար, երբ հանցավոր մտադրություններն իրագործվում են վնաս պատճառելու համար պիտանի առարկայի գործադրմամբ:

Վերոնշյալի առնչությամբ անհամաձայնություն հայտնելով Դատարանի և հետագայում, ըստ էության, նաև Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած համապատասխան դիրքորոշումներին՝ կրկին ցանկանում եմ ընդգծել, որ «նախապես» հատկանիշը վերաբերում է առարկայի կամ միջոցի պատրաստման կամ հարմարեցման ժամանակագրական սահմաններին և որևէ պարագայում չի խոսում նրա մասին, որ հենց հանցավորը պետք է հանցագործության գործիքի պատրաստման կամ հարմարեցման ձևով նախապատրաստական աշխատանքներ ձեռնարկի:

Զարգացնելով նախորդիվ արտահայտված դիրքորոշումները՝ Դատարանը սահմանել է, որ նախապես պատրաստված առարկայի ներքո պետք է ընկալվել այն իրերը, որոնք ստեղծվում են վնաս, վնասվածք պատճառելու նպատակով և արդյունքում իրենց կառուցվածքային միավորով ի զորու են նման վնասվածք պատճառել: Ընդ որում՝ այդ պայմաններում էական չէ՝ այն նախապես պատրաստված է եղել հանցավորի կողմից, թե հանցավորն արդեն իսկ մեկ այլ անձից ձեռք է բերել այն՝ իր հանցավոր նպատակն ի կատար ածելու շարժառիթից ելնելով: Ըստ Դատարանի, առարկան կամ միջոցը նախապես հարմարեցնելու հատկանիշի տակ պետք է հասկանալ այն իրավիճակները, երբ հանցավորը **փոխում է առարկայի կամ միջոցի ի սկզբանե ունեցած նպատակային նշանակությունը և այն հարմարեցնում է մարմնական վնասվածք պատճառելու համար**: Այսինքն՝ հարմարեցման տակ շատ ավելի պետք է հասկանալ առարկայի նպատակային նշանակության փոփոխությունը՝ կենցաղային կամ սպորտային նշանակությունից հանցավոր նպատակների ծառայեցնելը և այլն: Օրինակ՝ **խոհանոցային դանակը, որի նշանակությունը կենցաղային է, փոխում և հարմարեցնում (ծառայեցնում) է որևէ մեկին մարմնական վնասվածք պատճառելու համար կամ սպորտային մահակը հարմարեցվում (կամ հենց ինքն իրենով արդեն հարմար է) և ծառայեցվում է հանցավոր նպատակների համար**:

Դատարանի կողմից տրված նման մեկնաբանումը, ըստ իս, կրկին հիմնավոր չէ: Նախ, հարկ է նշել, որ **հարմարեցումը** ենթադրում է հանցավորի կողմից արդեն իսկ գոյություն ունեցող առարկայի կամ միջոցի նկատմամբ որևէ ներգործության իրականացում, դրա ձևափոխում²⁶, ուստի որևէ առարկա կամ միջոց չի կարող հենց ինքն իրենով արդեն հարմար լինել և համարվել մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված՝ ելնելով լոկ այն փաստից, որ այն պիտանի է մարմնական վնասվածք պատճառելու համար: Հարմարեցման՝ գործիքի նպատակային նշանակության փոփոխության, Դատարանի դատողությունների առթիվ անհրաժեշտ է ընդգծել, որ օբյեկտիվ իրականությունում որևէ առարկայի՝ իր նպատակային նշանակությանը հակառակ օգտագործումը դեռևս չի փոխում վերջինիս

²⁶ ՀՀ Վճռաբեկ դատարանի Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշում

նպատակային նշանակությունը, և նման դեպքում խոսք չի կարող գնալ հարմարեցման մասին: Դատարանի արտահայտած դիրքորոշումը վկայում է «մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված» և «որպես զենք օգտագործվող» կոնցեպտների ասիմիլյացիայի մասին, քանի որ Դատարանի գնահատմամբ ինքնին որևէ առարկայի գործադրումը (ծառայեցումը) մարմնական վնասվածք պատճառելու համար (տվյալ առարկայի նպատակային նշանակությանը հակառակ) բավարար է առարկայի մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված լինելու հանգամանքը հաստատված համարելու համար, ինչը «որպես զենք օգտագործվող» չափանիշի դասական բնութագրումն է: Մինչդեռ, ներկա օրենսդրական կարգավորումների պարագայում զենք կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես չպատրաստված որևէ առարկա կամ միջոց չի կարող առաջացնել ծանրացնող հանգամանքը (համարվի մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված), եթե այն չենթարկվի մարմնական վնասվածք պատճառելի առավել հարմար դարձնող կառուցվածքային փոփոխությունների՝ անգամ եթե տվյալ գործիքը (օրինակ՝ սպորտային մահակը) ի սկզբանե հարմար էր (պիտանի էր) մարմնական վնասվածք պատճառելու համար:

Բացի դրանից՝ Դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ առարկայի կամ միջոցի նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հատկանիշը չպետք է հասկանալ որպես հանցավորի կողմից առարկայի կամ միջոցի հարմարեցումը կամ պատրաստումը հանցավոր արարքի կատարումից առաջ՝ հենց այդ հանցանքը կատարելու նպատակով: Այսինքն՝ օրենքով չի սահմանափակվում առարկայի կամ միջոցի հարմարեցումը կամ պատրաստումը հենց տվյալ հանցանքը կատարելու համար:

Հիմնավոր է թվում նաև Դատարանի այն դատողությունը, որ առարկան կամ միջոցը հարմարեցնելը կամ պատրաստելը պետք է ժամանակային առումով նախորդեն ոտնձգության կատարմանը, սակայն պարտադիր պայման չէ, որ այն նախապես պատրաստված կամ հարմարեցված լինի հենց այդ հանցանքը կատարելու համար: Դատարանը, ի հիմնավորումն նշվածի՝ բերում է այն օրինակը, որ հնարավոր են դեպքեր, երբ հիշյալ առարկան նախապես պատրաստված լինի, և անձի մոտ հանցանք կատարելու մտադրությունը դեռևս առկա չլինի, սակայն, երբ անձն այդ առարկան՝ նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքով պայմանավորված, վերցնում է իր մոտ մեկ այլ անձի մարմնական վնասվածք պատճառելու նպատակով, ապա այդ դեպքում քննարկվող ծանրացնող հատկանիշը ևս առկա է:

Այնուամենայնիվ, Դատարանը հաջորդիվ պնդում է, որ այն իրավիճակում, երբ կենցաղային օգտագործման համար հարմարեցված առարկան անձը նախապես վերցնում է իր մոտ՝ հանցավոր նպատակներով (մեկ այլ անձի հետ հաշիվներ պարզելու համար), ապա այդ դեպքում ևս խնդրո առարկա ծանրացնող հանգամանքն առկա է: Վերոգրյալով Դատարանը կիսում է իրավակիրառի այն մոտեցումը, որ նախապես վերցված առարկան ևս նախապես հարմարեցված է, սակայն պայմանով, որ այն վերցվել է մարմնական վնասվածք պատճառելու համար: Նշվածի առնչությամբ նորից անհրաժեշտ է նշել, որ առարկայի հարմարեցումը որևէ պարագայում չի կարող առկա լինել՝ սուս գործիքը նախապես վերցրած լինելու հաշվառմամբ:

Անգամ Վճռաբեկ դատարանի հարմարեցման վերաբերյալ արտահայտված դիրքորոշման բացակայության պայմաններում դժվար է նման տեսակետն ընդունելի համարել այն պատճառով, որ եթե ցանկացած կենցաղային նշանակության առարկա մարմնական վնասվածք հասցնելու նպատակով նախապես վերցնելը բավարար լիներ ծանրացնող հանգամանքի առկայության համար, ապա առարկայազուրկ կլիներ «պատրաստված» եզրույթի ներա-

ռումն իրավադրույթում: Վերոգրյալի էությունը կայանում է նրանում, որ ցանկացած նպատակով պատրաստված յուրաքանչյուր առարկայի գործադրումը, եթե այն նախապես վերցվում է վնասվածք պատճառելու համար, ինքնին կառաջացնի ծանրացնող հանգամանքը հարմարեցված հատկանիշի ուժով, քանի որ «պատրաստված»-ը նույնպես պետք է նախապես վերցնել, ուստի, ինքնանպատակ է լրացուցիչ «պատրաստված» հասկացության նախատեսումը, մինչդեռ իրավական կարգավորումները չպետք է ընկալվեն և մեկնաբանվեն տարանջատված, այլ իրավադրույթը պետք է հաշվի առնվի ամբողջությամբ և մեկնաբանվի համակարգային համակցության մեջ, ինչը միայն թույլ կտա պատշաճ վերլուծել օրենսդրի կամքը և բացահայտել կարգավորման էությունը:

Ամփոփելով ծանրացնող հանգամանքի կիրառման պրակտիկայի արդյունքները՝ գտնում են, որ դրույթի կիրառման դեպքերի գերակշիռ մասը վկայում է իրավակիրառի իներցիայով գործելու և օրենսդրական փոփոխությունների հանդեպ ունեցած պահպանողականության մասին, ինչի արդյունքում անտեսվել են իրավադրույթի էական հատկանիշները և այն գերազանցապես կիրառվել է ծանրացնող հանգամանքի Նախկին օրենսգրքում առկա շարադրանքի տրամաբանությամբ:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանգում են հետևյալին.

1. ՀՀ քրեական նոր օրենսգրքով էապես նեղացվել է հանցագործության գործիքի վերաբերյալ հիմնական ծանրացնող հանգամանքի կիրառելիության շրջանակը:

2. Քննարկված որակյալ հատկանիշի առկայության համար պարտադիր է, որ համապատասխան առարկան կամ միջոցը պատրաստված կամ հարմարեցված լինի անմիջապես մարմնական վնասվածք պատճառելու նպատակով կամ լինի զենք՝ «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի իմաստով:

3. Ծանրացնող հանգամանքի առկայության համար պարտադիր չէ, որ առարկան կամ միջոցը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված լինի այն գործադրողի կողմից: Առարկան կամ միջոցը կարող է պատրաստված կամ հարմարեցված լինել նաև այլ անձի կողմից:

4. Դեպքի վայրից վերցված առարկայի գործադրումը կարող է առաջացնել ծանրացնող հանգամանքը, եթե այն հանդիսանում է զենք կամ եթե հարմարեցվել կամ պատրաստվել է մարմնական վնասվածք պատճառելու համար մինչև հանցանքը սկսելը:

5. Ձենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկայի կամ միջոցի գործադրումը չի ներառում գործադրման սպառնալիքը: Այն բոլոր հանցակազմերի դեպքում, որոնցով ծանրացնող հանգամանքը ներառում է բացառապես համապատասխան գործիքի գործադրումը, եթե հանցավորի կողմից զենքը կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկան կամ միջոցն օգտագործվել են ոչ թե փաստացի գործադրման կամ դրա փորձի, այլ սպառնալիք հասցնելու համար, ծանրացնող հանգամանքը չի կարող առկա լինել:

6. Առկա է օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն, որը կամ պետք է արտահայտվի համապատասխան հանցակազմերի ծանրացնող հանգամանքում առարկայի «գործադրումից» բացի նաև «գործադրման սպառնալիք» եզրույթի լրացմամբ, կամ խուլիգանության և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ հանցակազմերի ծանրացնող հանգամանքից «գործադրման սպառնալիք» հասկացության վերացմամբ:

7. Ծանրացնող հանգամանքը սահմանող իրավադրույթը քրեական արդարադատության մարմինների կողմից մեծապես կիրառվել է նախորդ իրավակարգավորումների հանդեպ դրսևորած պահպանողականությամբ՝ առանց հավուր պատշաճի գնահատելու օրենսդրական՝ ծանրացնող հանգամանքի էությունը փոփոխող նորամուծությունները, և առաջնորդվելով ծանրացնող հանգամանքի Նախկին օրենսգրքում առկա կարգավորման տրամաբանությամբ:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված մի շարք հանցակազմերի որակյալ հատկանիշ հանդիսացող նոր ծանրացնող հանգամանքին՝ արարքը զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելուն: Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում խնդրո առարկա հարցի վերաբերյալ հակասական իրավակիրառ պրակտիկայի առկայությունը, օրենքի ոչ միատեսակ կիրառության բազմաթիվ դեպքերը, ինչպես նաև իրավադրույթի համապարփակ մեկնաբանության անհրաժեշտությունը, որը հենց հոդվածի գլխավոր նպատակն է: Աշխատանքում փորձ է արվել համապարփակ մեկնաբանել իրավադրույթը՝ առանձին ուշադրություն դարձնելով խնդրահարույց և մասնագետների տարակարծությունն առաջացրած հարցերին: Մասնավորապես առաջ են քաշվել հետևյալ հարցադրումները. որո՞նք են առարկան կամ միջոցը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված դիտարկելու չափանիշները, ի՞նչ նպատակով պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի ծանրացնող հանգամանքի առկայության համար, ու՞մ կողմից պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի, կարո՞ղ է արդյոք դեպքի վայրից վերցված առարկայի գործադրումն առաջացնել ծանրացնող հանգամանքը: Բացի այդ, քննարկման առարկա են դարձվել հիշատակված ծանրացնող հանգամանքի կիրառման պրակտիկայի արդյունքները:

Annotation. The article is dedicated to the new aggravating circumstance, which is a qualitative characteristic of a number of crimes provided for by the new Criminal Code of the Republic of Armenia adopted on May 5, 2021, namely, committing the act with the use of a weapon or an object or means prepared or adapted in advance to cause bodily harm. The relevance of the chosen topic is evidenced by the existence of contradictory legal practice on the issue in question, numerous cases of non-uniform application of the law, as well as the need for a comprehensive interpretation of the legislation, which is the main goal of the article. The work attempts to comprehensively interpret the legislation, paying special attention to problematic issues and ones that have caused disagreement among specialists. In particular, the following questions are raised: What are the criteria for considering whether an object or means is prepared or adapted in advance to cause bodily harm? For what purpose should the object or means be adapted or prepared for the presence of an aggravating circumstance? By whom should the object or means be adapted or prepared? Can the use of an object taken from the scene of the crime cause an aggravating circumstance? In addition, the results of the practice of applying the aforementioned aggravating circumstance were discussed.

Аннотация. Статья посвящена новому отягчающему обстоятельству, которое является качественной характеристикой ряда преступлений, предусмотренных новым Уголовным кодексом Республики Армения, принятым 5 мая 2021 г., а именно совершение деяния с применением оружия, или предмета, или средства, заранее подготовленного или приспособленного для причинения телесных повреждений. Актуальность выбранной темы подтверждается наличием противоречивой юридической практики по рассматриваемому вопросу, многочисленными случаями неоднородного применения закона, а также необходимостью всестороннего толкования законодательства, что и является основной целью статьи. В работе предпринята попытка всестороннего толкования законодательства, при этом особое внимание уделено проблемным

вопросам и вопросам, вызвавшим разногласия среди специалистов. В частности, поднимаются следующие вопросы: «Каковы критерии рассмотрения того, является ли предмет или средство заранее приспособленным или подготовленным для причинения телесных повреждений?»; «С какой целью должен быть приспособлен или подготовлен предмет или средство для наличияотягчающего обстоятельства?»; «Кем должен быть приспособлен или подготовлен предмет или средство?»; «Может ли использование предмета, взятого с места преступления, стать отягчающим обстоятельством?». Кроме того, обсуждались результаты практики применения указанного отягчающего обстоятельства.

Բանալի բաներ – զենք, որպես զենք օգտագործվող, նախապես հարմարեցված, նախապես պատրաստված, առարկա, միջոց, ծանրացնող հանգամանք:

Keywords: *weapon, used as a weapon, adapted in advance, prepared in advance, object, means, aggravating circumstance.*

Ключевые слова: *оружие, использование в качестве оружия, заранее приспособленный, заранее изготовленный, предмет, средство, отягчающее обстоятельство.*

Օգտագործված գրականության ցանկ

1. 1998 թվականի հուլիսի 3-ին ընդունված «Ձենքի մասին» ՀՀ օրենք:
2. 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենք:
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի Սերյոժա Հովակիմյանի վերաբերյալ գործով 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-125/07 որոշում:
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի Ազատ Խլիլյանի և Աշոտ Աթաբեկյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՏԴ/0085/01/14 որոշում:
5. ՀՀ Վճռաբեկ դատարանի Հայկ Գալստյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0084/01/15 որոշում:
6. ՀՀ Վճռաբեկ դատարանի Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշում:
7. ՀՀ Վճռաբեկ դատարանի Սարգիս Գրիգորյանի վերաբերյալ գործով 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ ՀԿԴ/0054/01/22 որոշում:
8. ԵԴ/3076/01/24 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2025 թվականի փետրվարի 21-ի դատավճիռ:
9. ԵԴ/1257/01/23 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռ:
10. ԼԴ/0518/01/24, ԵԴ/3428/01/24, ԵԴ/3333/01/24, ԵԴ/1357/01/25, ԵԴ/3814/01/24, ԵԴ/3942/01/24, ՍԴ/3/0130/01/24, ԵԴ/3265/01/24, ԵԴ/3808/01/24 քրեական գործեր:
11. ԵԴ/1427/01/22, ԵԴ/1397/01/22, ԱԴ/0256/01/22, ԿԴ/0190/01/22, ԼԴ/2/0023/01/22, ԵԴ/0729/01/22, ԱԿԴ/0070/01/22, ԵԴ/0126/01/22, ԱԿԴ/2/0115/01/21, ՇԴ/0246/01/21, ԵԴ/1792/01/21, ԵԴ/1740/01/21, ԵԴ/1516/01/21, ԵԴ/1446/01/21, ԵԴ/1399/01/21, ԼԴ/0129/01/21, ԵԴ/1255/01/21, ՇԴ/0153/01/21, ԱԿԴ/0086/01/21, ԵԴ/1080/01/21, ՇԴ/0112/01/21, ԱԿԴ/4/0027/01/21, ԱԴ/0115/01/21, ԱԿԴ/4/0019/01/21, ԵԴ/0670/01/21, ԵԴ/0591/01/21, ԱԿԴ/1/0025/01/22, ԵԴ/0625/01/22, ԵԴ/0374/01/22, ԿԴ/0075/01/22, ԵԴ/0283/01/22, ԵԴ/0133/01/22, ԵԴ/0193/01/22, ՍԴ/1/0012/01/22, ՍԴ/1/0013/01/22, ԱԿԴ/2/0043/01/22, ԵԴ/0589/01/22, ՍԴ/0046/01/22, ՇԴ/0055/01/22, ԳԴ/0011/01/22, ԱԿԴ/1/0032/01/22, ԱԴ/ԱԴ/0080/01/22, ԼԴ/2/0023/01/22, ԵԴ/1112/01/22, ԼԴ/1/0008/01/22, ԼԴ/2/0049/01/22, ԵԴ/1251/01/22 քրեական գործեր:

12. Դ. Ա. Թումայան, Կ. Հ. Հովհաննիսյան, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս», Ոստումնական ձեռնարկ, ISBN 978-9939-64-367-0, «Լիմուշ» հրատ., Երևան, 2022թ., 914 էջ:

13. Դ. Ա. Թումայան, Գ. Թ. Գրիգորյան, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս երեք հատորներում», Հատոր առաջին, Ոստումնական ձեռնարկ, ISBN 978-9939-64-400-4, «Լիմուշ» հրատ., Երևան, 2025թ., 768 էջ:

14. Ս. Վ. Առաքելյան, Ա. Վ. Բարսեղյան, «Մարդու դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի», Գիտագործնական մեկնաբանություններ, ISBN 978-9939-9240-7-6, Արդարադատության ակադեմիա, 2023թ., 444 էջ:

15. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022 թվական:

<https://moj.am/storage/uploads/%D5%94%D5%90%D4%B5%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%20%D5%86%D5%88%D5%90%20%D5%95%D5%90%D4%B5%D5%86%D5%8D%D4%B3%D5%90%D5%94%D4%BB%20%D5%88%D5%92%D5%82%D4%B5%D5%91%D5%88%D5%92%D5%85%D5%91.pdf> (մուտք 06/08/2025)

16. Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի գործունեության մասին հաղորդում: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (մուտք 06/08/2025)

Ազգաբիդիս Մ. – ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլիասցե՝ marcazdaridis@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 11.08.2025 թ., տրվել է գրախոսության 11.08.2025 թ., երաշխավորվել է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, ի.գ.թ., դոցենտ Դ. Թումայանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.: